Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) 30.07.2014 թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

**«Կանոնակարգ Արեւմտեան Հայաստանի Հանրապետության
Կառավարության եւ Վարչապետի մասին»
օրենքի նախագծի վերաբերյալ**

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Նախագահությունը, Մշտական հանձնաժողովները եւ նրանց աշխատանքային խմբերը քննության առնելով սույն օրենքի նախագիծը՝ այն ներկայացրին Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) պատգամավորներին քննարկման եւ վերջնական որոշում ընդունելու համար:

Նշենք, որ սույն օրենքի նախագիծը Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության նիստում շրջանառության մեջ է դրել Արդարադատության նախկին նախարար Հրայր / Սուրիկ Ղազարյանը, որը Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության Վարչապետը ներկայացրեց Խորհրդարանի քննարկմանը, որպես օրենսդրական նախաձեռնություն:

Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովին (Խորհրդարանին) քննարկմանը ներկայացված վերոնշյալ օրենքի նախագծի վերաբերյալ նշում ենք, որ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովին (Խորհրդարանին) քննության առնելով սույն օրենքի նախագիծը պարզեց, որ՝

1. Ներկայացված օրենքի նախագիծը ոչ մի կերպ չի համապատասխանում Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի տրամաբանությունը, ինչը դեռեւս 2004 թվականից ընդունված եւ 2014-ին ամբողջացած է «Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի, Արեւմտյան Հայաստանի Ազգային ժողովի պատգամավորների կարգավիճակի եւ Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի կանոնակարգի մասին» Արեւմտյան Հայաստանի Օրենքի հիման վրա (07.03.2014թ.), ըստ որի՝ Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական համակարգը նախագահա-խորհրդարանական համակարգ է:
2. Սա իրավական հիմնական անհամապատասխանությունն է, որովհետեւ մնացյալը, որ շարադրված օրենքի նախագծում՝ շարադրված է այս հիմնական սխալի կառուցվածքային տրամաբանության հիմքի վրա:
3. Օրենքի նախագծի մեջ միտումնավոր սահմանափակված է Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության վարչապետի լիազորությունները, Արեւմտեան Հայաստանի Հանրապետության Նախագահի եւ Արեւմտեան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) լիազորությունները եւ ակնհայտ միտումնավորությամբ ուռճածված է Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարության նախարարների կաբինետի եւ նախարարների լիազորությունները:
4. Մինչդեռ իրականում կառավարության կազմը ներկայացնում է վարչապետը, քննարկման է ընդունում խորհրդարանը եւ հաստատում է նախագահը:
5. Մինչդեռ իրականում կառավարության կազմի մեջ փոփոխությունների խնդիրը քննարկում է խորհրդարանը եւ հաստատում է նախագահը:

6. Մինչդեռ իրականում վարչապետի հրաժարականը նշանակում է կառավարության հրաժարական:
7. Այս ամենը նշանակում է, որ օրենքի նախագծի հեղինակը կամ հեղինակները խնդիր են դրել շրջանցել Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի իրավական - քաղաքական բնույթը եւ շրջանառության մեջ դնել եւ օրենքի ուժ տալ մի օրենքի նախագծի, որը հակասում է Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական համակարգին եւ կարող է առաջացնել կառավարման ճգնաժամ:
8. Այդ թվում մերժելի է կամայական ձեւով ներմուծված օրենքի նախագծի այն դրույթը, թե օրենքի նախագիծը ուժի մեջ է մինչեւ Արեւմտեան Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը: Բնականաբար Արեւմտեան Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ձեւավորվելու է այն տրամաբանության համաձայն, որը Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի իրավական-քաղաքական տրամաբանությունն է, որպես նախագահա-խորհրդարանական համակարգ:

Քննարկելով սույն օրենքի նախագիծը եւ նկատի առնելով վերոհիշյալ փաստերը, Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովը (Խորհրդարանը)

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ա) Մերժել ներկայացված օրենքի նախագիծը, որպես Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի իրավական–քաղաքական տրամաբանությանը լիովին հակասող փաստաթուղթ:
բ) Ինչպես Արեւմտեան Հայաստանի Վտարանդի Կառավարությունը, այնպես էլ Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական համակարգի մյուս ինստիտուտները՝ նախագահական եւ խորհրդարանական, պարտավոր են աշխատել եւ առաջնորդվել Արեւմտեան Հայաստանի Հանրապետության պետական կառուցվածքի մասին Օրենքի դրույթների համաձայն, ընդունված՝ 07.03.2014-ին:

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի Նախագահ՝
Արմեն Տեր-Սարգսյան

Արեւմտեան Հայաստանի Ազգային ժողովի Քարտուղար՝
Սաթենիկ Ալեքսանյան

30.07.2014 թ.